ՊԵՏԵՕՖԻ

I

ՀՈՒՆՉ

Արևն այրում... շոգն է խեղդում...
Շունչ առնելու չը կայ օդ.
Լեցուն հասկը հասել արտում—
Հնձուորմ է նա կարօտ։

Արևն հասուն հասկն է շոյում...
Իմ սրրտումն էլ՝ երգով լի՜ք՝
Սէրն է հասել, քեզ է մընում,
Շուտով հընձիր, ա՛յ աղջիկ։

II

ՊՈԷՏ ԵՒ ԳԻՆԻ

Ես չեմ խընդրում, չեմ փափագում զարդարուն
Դափնէ պըսակ ինձ համար.
Այլ պըսակով, կոյսեր մատղաշ ու սիրուն,
Դուք զարդարէք իմ քընար։

Խաղողի թարմ տերևներից խընդագին
Պըսակ հիւսէք փառահեղ.
Պոէտն երգում ձեզ կը բաշխէ իւր հոգին,
Իսկ խաղողը—հիւթ համեղ։

Թարգմ. Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ